

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 սեպտեմբերի 2010 թվականի

թիվ 378

քաղ. Մոսկվա

ՄԱՔՍԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ
ԴԱՍԱԿԱՐԳԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մաքսային միության հանձնաժողովը *որոշեց*

1. 2011 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտնելու ժամկետով հաստատել՝
 - մաքսային ընթացակարգերի տեսակների դասակարգիչը (հավելված 1),
 - ապրանքների տեղափոխման առանձնահատկությունների դասակարգիչը (հավելված 2),
 - տրանսպորտի և ապրանքների փոխադրման տեսակների դասակարգիչը (հավելված 3),
 - մաքսային արժեքի որոշման մեթոդների դասակարգիչը (հավելված 4),
 - մաքսային արժեքի վերաբերյալ որոշումների դասակարգիչը (հավելված 5),
 - ապրանքների մաքսային հայտարարագրման առանձնահատկությունների դասակարգիչը (հավելված 6),
 - մաքսային վճարների վճարման գծով արտոնությունների դասակարգիչը (հավելված 7),
 - մաքսային հայտարարագրման ժամանակ օգտագործվող փաստաթղթերի տեսակների դասակարգիչը (հավելված 8),
 - այն հարկերի, հավաքագումների և այլ վճարների տեսակների դասակարգիչը, որոնց գանձումը վերապահված է մաքսային մարմիններին (հավելված 9),
 - այն մաքսային և այլ վճարների վճարման առանձնահատկությունների դասակարգիչը, որոնց գանձումը վերապահված է մաքսային մարմիններին (հավելված 10),
 - այն մաքսային և այլ վճարների վճարման եղանակների դասակարգիչը, որոնց գանձումը վերապահված է մաքսային մարմիններին (հավելված 11),
 - բեռի, փաթեթվածքի և փաթեթավորման նյութերի տեսակների դասակարգիչը (հավելված 12),
 - մատակարարման պայմանների դասակարգիչը (հավելված 13),
 - մաքսային մարմինների կողմից կայացվող որոշումների դասակարգիչը (հավելված 14),
 - չափման միավորների դասակարգիչը (հավելված 15),
 - հատուկ պարզեցված ընթացակարգերի տեսակների դասակարգիչը (հավելված 16),
 - ապրանքների մասին հայտարարագրերի տեսակների դասակարգիչը (հավելված 17),
 - «մաքսային տարանցում» ընթացակարգի պահպանումն ապահովելուն ուղղված

միջոցառումների դասակարգիչը (հավելված 18).

- մաքսատուրքերի, հարկերի վճարումն ապահովելու եղանակների դասակարգիչը (հավելված 19).

- «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան ապրանքների տեղափոխման տեսակների դասակարգիչը (հավելված 20).

- մաքսատուրքերի, հարկերի հաշվարկման դեպքում կիրառվող լրացուցիչ հատկանիշների և բնորոշիչների դասակարգիչը (հավելված 21):

2. 2011 թվականի հունվարի 1-ից կիրառել աշխարհի երկրների դասակարգիչը (հավելված 22) և արժույթների դասակարգիչը (հավելված 23):

3. Մահմանել, որ Մաքսային միության յուրաքանչյուր անդամ պետություն իրավասու է սույն Որոշման 2-րդ կետում նշված դասակարգիչներում կատարել լրացումներ, որոնք կիրառվում են Մաքսային միության մյուս անդամ պետություններին և Մաքսային միության հանձնաժողովի քարտուղարությանը ծանուցելուց հետո:

4. Մաքսային միության հանձնաժողովի քարտուղարությունը՝ շարունակել աշխարհի երկրների և արժույթների դասակարգիչները վարելու համար լիազորված՝ Մաքսային միության անդամ պետությունների մարմինների հետ սույն Որոշման 2-րդ կետում նշված դասակարգիչների միասնականացման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

Մաքսային միության հանձնաժողովի անդամներ՝

Բելառուսի
Հանրապետությունից

Ղազախստանի
Հանրապետությունից

Ռուսաստանի
Դաշնությունից

Ա. Կոբյակով

Ու. Շուկեն

Ի. Շուվալով

[Հավելվածներ](#)

Հավելված 1

Մաքսային միության հանձնաժողովի 2010
թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 378 որոշման

Մաքսային ընթացակարգերի տեսակների դասակարգիչ

Ծածկագիր	Անվանում
00	Նախորդող մաքսային ընթացակարգերի բացակայություն

10	Արտահանում
21	Մաքսային տարածքից դուրս վերամշակում
23	Ժամանակավոր արտահանում
31	Վերաարտահանում
40	Ներքին սպառման համար բացթողում
51	Մաքսային տարածքում վերամշակում
53	Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)
60	Վերաներմուծում
70	Մաքսային պահեստ
77	Ազատ պահեստ
78	Ազատ մաքսային գոտի
80	Մաքսային տարանցում
90	Հատուկ մաքսային ընթացակարգ
91	Ներքին սպառման համար վերամշակում
93	Ոչնչացում
94	Հրաժարում՝ հոգուտ պետության
96	Անմաքս առևտուր

Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 378 որոշման

Ապրանքների տեղափոխման առանձնահատկությունների դասակարգիչ

Ծածկագիր	Անվանում
000	Ապրանքների տեղափոխման առանձնահատկությունները սահմանված չեն
001	Անհատույց օգնություն ցուցաբերելու եւ (կամ) բարեգործական նպատակների համար նախատեսված ապրանքներ
002	Մարդասիրական օգնության կարգով ստացվող ապրանքներ
003	Տեխնիկական օգնություն ցուցաբերելու համար նախատեսված ապրանքներ
004	Տարերային աղետների, բնական եւ տեխնաձին բնույթի արտակարգ իրավիճակների հետեւանքների կանխարգելման եւ վերացման նպատակներով տեղափոխվող ապրանքներ
005	Շրջանառության մեջ բաց թողնված դրամական ոսկի, ազգային արժույթ եւ արտարժույթ (բացի դրամագիտական նպատակներով օգտագործվող արժույթից), արժեթղթեր
009	Մաքսային միության անդամ պետություններից ծագող, որսված եւ ցանկացած տեսակի տրանսպորտային միջոցով ներմուծվող ու Մաքսային միության անդամ պետություններից ծագած համարվող ծովային արդյունագործության արտադրանք
010	Որպես պաշարներ տեղափոխվող ապրանքներ
013	Կանոնադրական կապիտալում (ֆոնդում) որպես ներդրում տեղափոխվող ապրանքներ
018	Սխալմամբ մատակարարված ապրանքներ
020	Սպորտային մրցումների եւ մարզումների, համերգների, թատերական ներկայացումների, մրցույթների, փառատոների, կրոնական, մշակութային եւ նույնատիպ այլ միջոցառումների անցկացման, ցուցահանդեսների, տոնավաճառների ժամանակ ցուցադրությունների, ինչպես

Ծածկագիր	Անվանում
	Նաեւ զանգվածային լրատվության միջոցներով պաշտոնական եւ այլ միջոցառումների անցկացման ու լուսաբանման համար նախատեսված եւ վերադարձման ենթակա ապրանքներ՝ բացառությամբ 090, 096, 097 դիրքերում նշված ապրանքների
021	Գովազդային նյութեր եւ հուշանվերային արտադրանք, որոնք ենթակա չեն վերադարձման
027	Որպէս բազմաշրջանառու տարաներ օգտագործվող փաթեթվածքներ, կոնտեյներներ, տակդիրներ, որոնք ենթակա են վերադարձման
031	Մաքսային միության անդամ պետությունների կազմակերպությունների՝ արտերկրում գործունեությունն ապահովելու համար նախատեսված ապրանքներ
032	Օտարերկրյա պետությունների, միջազգային միջկառավարական կազմակերպությունների հասցեով տեղափոխվող ապրանքներ
042	Բողոքագրի հիման վրա մատակարարվող կամ վերադարձվող ապրանքներ
044	Վերանորոգում կատարելու եւ (կամ) երաշխիքային սպասարկում իրականացնելու նպատակով տեղափոխվող կամ վերադարձվող ապրանքներ, այդ թվում՝ տրանսպորտային միջոցներ, դրանց պահեստամասեր եւ (կամ) սարքավորումներ
054	Գազի պահեստարան մատակարարվող կամ այդպիսի պահեստարաններից վերադարձող բնական գազ
055	Խողովակաշարային տրանսպորտով տեղափոխվող եւ դրա հետ կարգաբերման-գործարկման աշխատանքներ կատարելու համար անհրաժեշտ ապրանքներ
061	Որպէս փորձանմուշ եւ նմուշ տեղափոխվող ապրանքներ
062	Իոնացնող ճառագայթման աղբյուրների չվերականգնվող մնացորդներ
063	«Արտադրանքը բաժանելու մասին» համաձայնագրերին համապատասխան մատակարարվող ապրանքներ
070	Մաքսային միության անդամ պետությունների տարածքների սահմաններից դուրս գտնվող այն արհեստական կղզիների, կառույցների, այլ օբյեկտների շինարարության (կառուցման) համար նախատեսված ապրանքներ, որոնց նկատմամբ Մաքսային միության անդամ

Ծածկագիր	Անվանում
	պետություններն ունեն (կունենան) բացառիկ իրավազորություն
071	Մաքսային միության մաքսային տարածքների սահմաններից դուրս գտնվող այն արհեստական կղզիներ, կայանքներ, կառույցներ եւ այլ օբյեկտներ կամ այն արհեստական կղզիներից, կայանքներից, կառույցներից եւ այլ օբյեկտներից տեղափոխվող ապրանքներ, որոնց նկատմամբ Մաքսային միության անդամ պետություններն ունեն (կունենան) բացառիկ իրավազորություն
090	Մոշի քաղաքում 2014 թվականի ծնեռային XXII օլիմպիական եւ ծնեռային XI պարալիմպիկ խաղերի նախապատրաստման եւ (կամ) անցկացման համար տեղափոխվող ապրանքներ
096	Աստանայի եւ Ալմաթի քաղաքներում 2011 թվականի VII ասիական խաղերի նախապատրաստման եւ (կամ) անցկացման համար տեղափոխվող ապրանքներ
097	Մինսկ քաղաքում 2014 թվականի հոկտեմբերի աշխարհի առաջնության նախապատրաստման եւ (կամ) անցկացման համար տեղափոխվող ապրանքներ
098	Վլադիվոստոկ քաղաքում 2012 թվականի Ասիական-խաղաղովկիանոսյան տնտեսական համագործակցության (ԱԽՏՀ) գագաթաժողովի նախապատրաստման եւ (կամ) անցկացման համար տեղափոխվող ապրանքներ
100	«Հյուսիսային հոսք» գազատարի շինարարության համար տեղափոխվող ապրանքներ
101	«Հարավային հոսք» գազատարի շինարարության համար տեղափոխվող ապրանքներ
110	Մաքսային միության ապրանքներ ճանաչված՝ բացառապես օտարերկրյա ապրանքների օգտագործմամբ ՀՏԳ-ում պատրաստված (ստացված) ապրանքներ, ինչը հաստատվում է «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքների օգտագործմամբ պատրաստված (ստացված) ապրանքի՝ Մաքսային միության ապրանքներ ճանաչելու մասին եզրակացությամբ, եւ որոնք չեն արտահանվում Մաքսային միության մաքսային տարածքի սահմաններից դուրս
111	Մաքսային միության ապրանքների եւ Մաքսային միության ապրանքներ ճանաչված օտարերկրյա ապրանքների օգտագործմամբ ՀՏԳ-ում պատրաստված (ստացված) ապրանքներ, ինչը հաստատվում է «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքների օգտագործմամբ պատրաստված (ստացված)

Ծածկագիր	Անվանում
	ապրանքի՝ Մաքսային միության ապրանքներ ճանաչելու մասին եզրակացությամբ, եւ որոնք չեն արտահանվում Մաքսային միության մաքսային տարածքի սահմաններից դուրս
112	Բացառապես Մաքսային միության ապրանքների, այդ թվում՝ Մաքսային միության՝ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով չձեւակերպված ապրանքների օգտագործմամբ ՀՏԳ-ում պատրաստված (ստացված) եւ Մաքսային միության մաքսային տարածքի սահմաններից դուրս չարտահանվող ապրանքներ
113	Մաքսային միության ապրանքներից, այդ թվում՝ Մաքսային միության՝ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով չձեւակերպված ապրանքներից ՀՏԳ-ում պատրաստված (ստացված) եւ Մաքսային միության մաքսային տարածքի սահմաններից դուրս արտահանվող ապրանքներ
114	«Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքների օգտագործմամբ ՀՏԳ-ում պատրաստված (ստացված), Մաքսային միության ապրանքներ ճանաչված եւ Մաքսային միության մաքսային տարածքի սահմաններից դուրս արտահանվող ապրանքներ
115	«Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքների օգտագործմամբ ՀՏԳ-ում պատրաստված (ստացված) եւ մաքսային մարմնի կողմից որպես «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներ նույնականացված եւ Մաքսային միության մաքսային տարածքի սահմաններից դուրս չարտահանվող օտարերկրյա ապրանքներ
116	«Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքների օգտագործմամբ ՀՏԳ-ում պատրաստված (ստացված), մաքսային մարմնի կողմից որպես օտարերկրյա ապրանքներ չնույնականացված եւ Մաքսային միության մաքսային տարածքի սահմաններից դուրս չարտահանվող ապրանքներ
117	«Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների, այդ թվում՝ Մաքսային միության այն ապրանքների օգտագործմամբ ՀՏԳ-ում պատրաստված (ստացված) ապրանքներ, որոնց համար ներկայացվել է «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված, Մաքսային միության ապրանքներ չհանդիսացող օտարերկրյա ապրանքների օգտագործմամբ պատրաստված (ստացված) ապրանքի՝

Ծածկագիր	Անվանում
	Մաքսային միության ապրանքներ ճանաչելու մասին եզրակացություն, եւ որոնք արտահանվում են Մաքսային միության մաքսային տարածքի սահմաններից դուրս
118	«Մաքսային միության մաքսային տարածքում ազատ (հատուկ, առանձնահատուկ) տնտեսական գոտիների եւ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի հետ կապված հարցերի վերաբերյալ» համաձայնագրի 17-րդ հոդվածի 4-րդ կետի երրորդ պարբերությամբ սահմանված ՀՏԳ-ի տարածքում գործունեություն իրականացնելու մասին համաձայնագրի իրագործման նպատակով ՀՏԳ-ի ռեզիդենտի (մասնակցի) կողմից «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված, շահագործման մեջ դրված եւ օգտագործվող՝ սարքավորում համարվող օտարերկրյա ապրանքներ
119	ՀՏԳ-ի նավահանգստում կամ լոգիստիկ կենտրոններում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներ, որոնք ձեւակերպվում են «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով՝ հաշվի առնելով «Մաքսային միության մաքսային տարածքում ազատ (հատուկ, առանձնահատուկ) տնտեսական գոտիների եւ «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի հետ կապված հարցերի վերաբերյալ» համաձայնագրի 17-րդ հոդվածի 4-րդ կետի երրորդ պարբերությամբ սահմանված մաքսատուրքերի, հարկերի հաշվարկման առանձնահատկությունները
120	Մաքսային միության ապրանքներ ճանաչված՝ բացառապես օտարերկրյա ապրանքների օգտագործմամբ ազատ պահեստում պատրաստված (ստացված) ապրանքներ, ինչը հաստատվում է «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքների օգտագործմամբ պատրաստված (ստացված) ապրանքի՝ Մաքսային միության ապրանքներ ճանաչելու մասին եզրակացությամբ, եւ որոնք չեն արտահանվում Մաքսային միության մաքսային տարածքի սահմաններից դուրս
121	Մաքսային միության ապրանքների եւ Մաքսային միության ապրանքներ ճանաչված օտարերկրյա ապրանքների օգտագործմամբ ազատ պահեստում պատրաստված (ստացված) ապրանքներ, ինչը հաստատվում է «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքների օգտագործմամբ պատրաստված (ստացված) ապրանքի՝ Մաքսային միության ապրանքներ ճանաչելու մասին եզրակացությամբ, եւ որոնք

Ծածկագիր	Անվանում
	չեն արտահանվում Մաքսային միության մաքսային տարածքի սահմաններից դուրս
122	Բացառապես Մաքսային միության ապրանքների, այդ թվում՝ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով չձեւակերպված՝ Մաքսային միության ապրանքների օգտագործմամբ ազատ պահեստում պատրաստված (ստացված) ապրանքներ, որոնք չեն արտահանվում Մաքսային միության մաքսային տարածքի սահմաններից դուրս
123	Մաքսային միության ապրանքներից, այդ թվում՝ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով չձեւակերպված Մաքսային միության ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքներ, որոնք արտահանվում են Մաքսային միության մաքսային տարածքի սահմաններից դուրս
124	«Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված, Մաքսային միության ապրանքներ ճանաչված օտարերկրյա ապրանքների օգտագործմամբ ազատ պահեստում պատրաստված (ստացված) ապրանքներ, որոնք արտահանվում են Մաքսային միության մաքսային տարածքի սահմաններից դուրս
125	«Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված, մաքսային մարմնի կողմից որպես «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքներ նույնականացված օտարերկրյա ապրանքների օգտագործմամբ ազատ պահեստում պատրաստված (ստացված) եւ Մաքսային միության մաքսային տարածքի սահմաններից դուրս չարտահանվող ապրանքներ
126	«Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված, մաքսային մարմնի կողմից որպես օտարերկրյա ապրանքներ չնույնականացված օտարերկրյա ապրանքների օգտագործմամբ ազատ պահեստում պատրաստված (ստացված) եւ Մաքսային միության մաքսային տարածքի սահմաններից դուրս չարտահանվող ապրանքներ
127	«Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներից, այդ թվում՝ Մաքսային միության այն ապրանքների օգտագործմամբ ազատ պահեստում պատրաստված (ստացված) ապրանքներ, որոնց համար ներկայացվել է «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված օտարերկրյա ապրանքների օգտագործմամբ պատրաստված (ստացված) ապրանքի՝ Մաքսային միության ապրանքներ չհանդիսացող ապրանք ճանաչելու մասին եզրակացություն, եւ որոնք արտահանվում են Մաքսային միության մաքսային

Ծածկագիր	Անվանում
	տարածքի սահմաններից դուրս
128	«Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգով ձեւակերպված սարքավորումներ հանդիսացող, շահագործման մեջ դրված եւ «Ազատ պահեստների եւ «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի մասին» համաձայնագրի 11-րդ հոդվածի 1-ին կետի 1-4 ենթակետերով սահմանված գործառնությունների իրականացման համար ազատ պահեստի տիրապետողի կողմից օգտագործվող օտարերկրյա ապրանքներ, որոնք ձեւակերպվում են «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով՝ հաշվի առնելով նշված համաձայնագրի 14-րդ հոդվածի 4-րդ կետի երրորդ պարբերության մեջ սահմանված՝ մաքսատուրքերի, հարկերի հաշվարկման առանձնահատկությունները
129	«Վերաներմուծում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներ, որոնց համար Մաքսային միության մաքսային օրենսգրքի 293-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան իրականացվում է ներմուծման մաքսատուրքերի, հարկերի եւ (կամ) դրանցից տոկոսների, այլ հարկերի, սուբսիդիաների գումարների փոխհատուցում
130	«Վերաներմուծում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքներ, որոնց համար Մաքսային միության մաքսային օրենսգրքի 293-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան չի իրականացվում ներմուծման մաքսատուրքերի, հարկերի եւ (կամ) դրանցից տոկոսների, այլ հարկերի, սուբսիդիաների գումարների փոխհատուցում
131	Ապրանքների՝ մաքսային տարածքում վերամշակման եւ ներքին սպառման համար վերամշակման արդյունքում գոյացած թափոններ
132	Ապրանքների՝ մաքսային տարածքում վերամշակման եւ ներքին սպառման համար վերամշակման արդյունքում գոյացած մնացորդներ
133	«Մաքսային տարածքում վերամշակում», «մաքսային տարածքից դուրս վերամշակում», «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգերով ձեւակերպված ապրանքների վերամշակման արդյունքում ստացված՝ վերամշակումից հետո ստացվելիք արդյունքներ
134	Մաքսային միության մաքսային օրենսգրքի 248-րդ հոդվածին համապատասխան Մաքսային միության մաքսային տարածքից արտահանվող ապրանքներին համարժեք՝ վերամշակումից

Ծածկագիր	Անվանում
	հետո ստացվելիք արդյունքներ
135	Մաքսային միության մաքսային օրենսգրքի 259-րդ հոդվածին համապատասխան վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների փոխարեն Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող օտարերկրյա ապրանքներ
136	Մաքսային միության մաքսային օրենսգրքի 248-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ մասին համապատասխան օտարերկրյա ապրանքների փոխանակման արդյունքում ստացված եւ արտահանվող՝ վերամշակումից հետո ստացվելիք արդյունքներ
15X*	Ապրանքների տեղափոխման համար Բելառուսի Հանրապետությունում միակողմանիորեն ներմուծված այլ առանձնահատկություններ
16X*	Ապրանքների տեղափոխման համար Ղազախստանի Հանրապետությունում միակողմանիորեն ներմուծված այլ առանձնահատկություններ
17X*	Ապրանքների տեղափոխման համար Ռուսաստանի Դաշնությունում միակողմանիորեն ներմուծված այլ առանձնահատկություններ

* Ծածկագրի երրորդ նիշը («X») կարող է ձեռք բերել «0»–«9» նշանակություն

Մաքսային միության հանձնաժողովի 2010
թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 378 որոշման

Տրանսպորտի տեսակների եւ ապրանքների տրանսպորտային փոխադրման դասակարգիչ

Ծածկագիր	Անվանում
10	Ծովային տրանսպորտ*
20	Երկաթուղային տրանսպորտ*
30	Ավտոճանապարհային տրանսպորտ*
40	Օդային տրանսպորտ*
50	Փոստային առաքանի
71	Խողովակաշարային տրանսպորտ
72	Էլեկտրահաղորդման գծեր
80	Ներքին ջրային տրանսպորտ*
90	Վարելու միջոցով՝ որպես ապրանք տեղափոխվող տրանսպորտային միջոց
99	Այլ

* այդ թվում՝ նշված տրանսպորտի տեսակով փոխադրվող ցանկացած տրանսպորտային միջոց

Մաքսային միության հանձնաժողովի 2010
թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 378 որոշման

Մաքսային արժեքի որոշման մեթոդների դասակարգիչ

Ծածկագիր	Անվանում
0	Մաքսային արժեքը հետաձգված կարգով որոշելը
1	Ներմուծվող ապրանքների հետ կապված գործարքի արժեքի մեթոդ
2	Նույնական ապրանքների հետ կապված գործարքի արժեքի մեթոդ
3	Համանման ապրանքների հետ կապված գործարքի արժեքի մեթոդ
4	Հանման մեթոդ
5	Գումարման մեթոդ
6	Պահուստային մեթոդ

Մաքսային միության հանձնաժողովի 2010
թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 378 որոշման

Մաքսային արժեքի վերաբերյալ որոշումների դասակարգիչ

Ծած- կագիր	Անվանում
0	Մաքսային արժեքն ընդունված է
1	Մաքսային արժեքը ճշգրտված է
2	Անցկացվում է լրացուցիչ ստուգում

Մաքսային միության հանձնաժողովի 2010
թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 378 որոշման

Ապրանքների մաքսային հայտարարագրման առանձնահատկությունների
դասակարգիչ

Ծածկա- գիր	Ապրանքների մաքսային հայտարարագրման առանձնահատկությունները
ՍԴԴ	Նախնական մաքսային հայտարարագրում
ՄԴԴ	Ոչ լրիվ մաքսային հայտարարագրում (Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության համար)
ՍԴԴ	Պարբերական մաքսային հայտարարագրում (Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության համար)
ՅԴԴ	Ժամանակավոր պարբերական հայտարարագրում (Ժամանակավոր հայտարարագիր) (Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության համար)
ՍՅԴ	Ժամանակավոր պարբերական հայտարարագրում (ամբողջական հայտարարագիր) (Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության համար)
ՕԿԴ	Սահմանված ժամանակահատվածում չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում գտնվող ապրանքների մաքսային հայտարարագրման առանձնահատկությունները (ապրանքների առանձին բաղադրիչ մասերի հայտարարագիր (դիմում))
ՅՍԿ	Սահմանված ժամանակահատվածում չհավաքված կամ կազմատված, այդ թվում՝ չկոմպլեկտավորված կամ անավարտ վիճակում գտնվող ապրանքների մաքսային հայտարարագրման առանձնահատկությունները (ապրանքների բոլոր բաղադրիչ մասերի ամբողջական հայտարարագիր)
ՅԴԴ	Մինչեւ մաքսային հայտարարագիր ներկայացնելը ապրանքների բացթողման ժամանակ դրանց մաքսային հայտարարագրման

Ծածկագիր	Ապրանքների մաքսային հայտարարագրման առանձնահատկությունները
	առանձնահատկությունները
HBT	Մաքսային միության մաքսային տարածք անօրինական ներմուծված ապրանքների մաքսային հայտարարագրման առանձնահատկությունները
ДВД	Խողովակաշարային տրանսպորտով եւ էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների մաքսային հայտարարագրման լրացուցիչ առանձնահատկությունները (լրացուցիչ ժամանակավոր հայտարարագիր) (Ռուսաստանի Դաշնության համար)
ИТД	Մաքսային միության մաքսային օրենսդրությանը եւ (կամ) Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան ապրանքների մաքսային հայտարարագրման այլ առանձնահատկություններ
30С	Ապրանքների մաքսային հայտարարագրումը՝ նշելով կողմնորոշիչ տեղեկություններ (Բելառուսի Հանրապետության համար)
3ТС	Ապրանքների մաքսային հայտարարագրումը՝ նշելով կոնկրետ տեղեկություններ (Բելառուսի Հանրապետության համար)

Մաքսային միության հանձնաժողովի 2010
թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 378 որոշման

Մաքսային վճարումների վճարման գծով արտոնությունների դասակարգիչ

Անվանում	Ծածկագիր
1	2
Բաժին 1. Մաքսային միության օրենսդրությամբ նախատեսված արտոնություններ	
1.1. Մաքսատուրքի վճարման գծով արտոնություններ	
Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ Մաքսային միության անդամ պետությունների արժույթի, երրորդ երկրների արժույթի (բացի դրամագիտական նպատակներով օգտագործվող արժույթից), ինչպես նաև արժեթղթերի համար ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատում	ԵԵ
Որպես մարդասիրական օգնություն եւ (կամ) վթարների, աղետների ու տարերային աղետների հետեւանքները վերացնելու նպատակով Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների համար ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատում	ԵԴ
Որպես անհատույց օգնություն (աջակցության), ինչպես նաև պետությունների, միջազգային կազմակերպությունների, կառավարությունների կողմից բարեգործական՝ ներառյալ տեխնիկական օգնություն (աջակցություն) ցուցաբերելու նպատակներով ներմուծվող ապրանքների համար, բացի ենթաակցիզային ապրանքներից (բացառությամբ հատուկ բժշկական նպատակների համար նախատեսված թեթեւ մարդատար ավտոմոբիլների), ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատում	ԵԴ
Օտարերկրյա պետությունների եւ միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերին համապատասխան տրամադրված վարկերի հաշվին ներմուծվող սարքավորումների, այդ թվում՝ տվյալ սարքավորման՝ մատակարարվող կոմպլեկտի մեջ մտնող մեքենաների, մեխանիզմների, նյութերի եւ կոմպլեկտավորող տարրերի (բացառությամբ ենթաակցիզային ապրանքների) համար ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատում	ԿՄ
Մաքսային միության անդամ պետությունների բյուջեներով հատկացված նպատակային միջոցների հաշվին ձեռք բերված՝ Մաքսային միության տարածքում անալոգը չունեցող	ԴՈ

<p>մանկական սննդի արտադրության համար նախատեսված սարքավորումների (դրանց կոմպլեկտավորող տարրերի եւ պահեստամասերի),ինչպես նաեւ օտարերկրյա պետությունների կամ օտարերկրյա պետությունների կառավարությունների կողմից տրամադրված՝ օտարերկրյա կապակցված վարկերի հաշվին ձեռք բերված՝ մանկական սննդի արտադրության համար նախատեսված սարքավորումների (դրանց կոմպլեկտավորող տարրերի եւ պահեստամասերի) համար ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատում</p>	
<p>ՄՄ ԱՏԳ ԱԱ 8701, 8702, 8703, 8704, 8705 ապրանքային դիրքերում ընդգրկված, Մաքսային միության անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների կողմից «արդյունաբերական հավաքում» հասկացության կիրառմամբ արտադրված շարժիչով տրանսպորտային միջոցների համար ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատում այն դեպքում, եթե կատարվեն սահմանված պայմաններն ու չափանիշները</p>	<p>ՄՄ</p>
<p>Կազմակերպությունների կանոնադրական (պահուստային) կապիտալում այդ կապիտալի ձեւավորման համար հիմնադիր փաստաթղթերով սահմանված ժամկետների սահմաններում որպես օտարերկրյա հիմնադրի ներդրում ներմուծվող ապրանքների համար ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատում</p>	<p>ԿԿ</p>
<p>Կազմակերպության կանոնադրական (պահուստային) կապիտալում (ֆոնդում) Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված կարգով այդ կապիտալի (ֆոնդի) ձեւավորման համար հիմնադիր փաստաթղթերով նախատեսված ժամկետների սահմաններում երրորդ երկրներից որպես հիմնադրի ներդրում ներմուծվող ապրանքների համար ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատում</p>	<p>ԿՓ</p>
<p>Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված՝ նավերի միջազգային ռեեստրներում գրանցվող լողացող նավերի համար ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատում</p>	<p>ՄՄ</p>
<p>Մաքսային միության անդամ պետությունների նավերի, ինչպես նաեւ Մաքսային միության անդամ պետությունների իրավաբանական եւ ֆիզիկական անձանց կողմից վարձակալված (վարձված) նավերի՝ խորջրյա գոտիներում արդյունագործական ձկնորսության արտադրանքի համար ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատում</p>	<p>ՄՄ</p>
<p>Մաքսային միության անդամ պետություններից որեւէ մեկի դրոշի ներքո լողացող՝ արդյունագործական ձկնորսական նավատորմի՝ ներմուծվող այն նավերի համար ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատում, որոնք Մաքսային միության անդամ պետությունների տարածքների սահմաններից դուրս հիմնանորոգվել եւ (կամ) վերազինվել էին՝ այդ աշխատանքները մինչեւ 2008 թվականի սեպտեմբերի 1-ն ավարտելու պայմանով, եւ որոնք ավելի շուտ արտահանված են եղել նշված տարածքից</p>	<p>ՄՄ</p>
<p>Սոչի քաղաքում 2014 թվականի ձմեռային XXII օլիմպիական եւ ձմեռային XI պարաօլիմպիկ խաղերի անցկացման նպատակով ներմուծվող ապրանքների համար (բացառությամբ ենթակապիտալի ապրանքների) ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատում</p>	<p>ՄՄ</p>

Աստանայի եւ Ալմաթի քաղաքներում 2011 թվականի ձմեռային VII ասիական խաղերի անցկացման նպատակով ներմուծվող ապրանքների համար (բացառությամբ ենթասակցիզային ապրանքների) ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատում	AI
Մինսկ քաղաքում 2014 թվականի հոկտեմբերի աշխարհի առաջնության անցկացման նպատակով ներմուծվող ապրանքների համար(բացառությամբ ենթասակցիզային ապրանքների) ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատում	ԿՄ
Մեկ առաքողի կողմից մեկ ստացողի հասցեով մեկ տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթով Մաքսային միության մաքսային տարածքով ներմուծվող այն ապրանքների համար, բացառությամբ անձնական օգտագործման ապրանքների, ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատում, որոնց ընդհանուր մաքսային արժեքը չի գերազանցում երկու հարյուր եվրոյին համարժեք գումարը	HC
Մաքսային միության անդամ պետության՝ առաջնահերթ համարվող գործունեության ոլորտում (տնտեսության ոլորտում) իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում, Մաքսային միության այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, Մաքսային միության անդամ պետության տարածքում բացառապես օգտագործվելու համար ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց կոմպլեկտավորող տարրերի եւ պահեստամասերի, հումքի եւ նյութերի համար ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատում	ИП
Մաքսային միության անդամ պետությունների կենտրոնական (ազգային) բանկերի կողմից ներմուծվող՝ լիգատուրային զանգվածի 1000 մասերի մեջ 995 մասերից ոչ պակաս քիմիապես մաքուր ոսկու պարունակությամբ ոսկու ձուլակտորի (99,5%-ից ոչ պակաս հարգ), լիգատուրային զանգվածի 1000 մասերի մեջ 999 մասերից ոչ պակաս քիմիապես մաքուր արծաթի պարունակությամբ արծաթի ձուլակտորի (99,9%-ից ոչ պակաս հարգ) եւ լիգատուրային զանգվածի 1000 մասերի մեջ 995,5 մասերից ոչ պակաս քիմիապես մաքուր մետաղի պարունակությամբ պլատինի ձուլակտորի (99,95%-ից ոչ պակաս հարգ) համար ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատում	ДМ
Մաքսային միության անդամ պետության՝ Մաքսային միության այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան սեփականություն դարձած ապրանքների համար ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատում	СГ
Մինչեւ 2014 թվականի հուլիսի 1-ը Բելառուսի Հանրապետություն եւ Ղազախստանի Հանրապետություն ներմուծվող քաղաքացիական ուղեւորատար այն օդանավերի (ՄՄ ԱՏԳ ԱԱ 8802 40 002 2 ծածկագիր) համար ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատում, որոնք օգտագործվում են միջազգային փոխադրումներ իրականացնելու եւ (կամ) այն պետության տարածքում եւ (կամ) Մաքսային միության անդամ պետությունների տարածքների միջեւ ներքին փոխադրումներ իրականացնելու նպատակով, ուր ներմուծվել է տվյալ ապրանքը	BC
BC ծածկագրով սահմանված արտոնության կիրառմամբ Բելառուսի Հանրապետություն ու Ղազախստանի Հանրապետություն ներմուծված քաղաքացիական ուղեւորատար օդանավերի (ՄՄ ԱՏԳ ԱԱ 8802 40 002 2 ծածկագիր) եւ Մաքսային միության մաքսային տարածքի սահմաններից դուրս դրանք վերանորոգելուց կամ տեխնիկական	СР

սպասարկում իրականացնելուց հետո շահագործման ժամկետի ընթացքում Բելառուսի Հանրապետություն ու Ղազախստանի Հանրապետություն ներմուծվող քաղաքացիական ուղեւորատար օդանավերի համար ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատում	
Օտարերկրյա արտադրության ուղեւորատար օդանավերի վերանորոգման եւ տեխնիկական սպասարկման համար անհրաժեշտ օդանավերի շարժիչների, պահեստամասերի եւ սարքավորումների համար ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատում	A3
Տեղափոխվող պաշարների համար ներմուծման կամ արտահանման մաքսատուրքի վճարումից ազատում	ՔՓ
«Ներքին սպառման համար բացթողում», «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)», «արտահանում» մաքսային ընթացակարգերից տարբեր մաքսային այլ ընթացակարգով ձեւակերպված ապրանքների համար մաքսատուրք չի վճարվում	ՓՓ
Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերով եւ (կամ) Մաքսային միության հանձնաժողովի որոշումներով սահմանված ցանկում ընդգրկված եւ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպվող ապրանքների համար ներմուծման մաքսատուրքի վճարումից լրիվ պայմանական ազատում	ՔԲ
Զարգացող երկրներից ծագող ապրանքների համար սակագնային առանձնաշնորհում	ԴԴ
Առավել թույլ զարգացած երկրներից ծագող ապրանքների համար սակագնային առանձնաշնորհում	ԻԻ
Մաքսային միության անդամ պետությունների հետ առետրի ազատ գոտի ձեւավորող պետություններից ծագող եւ ներմուծվող ապրանքների, ինչպես նաեւ Մաքսային միության անդամ պետությունից ծագող եւ դրանից Մաքսային միության անդամ պետության հետ առետրի ազատ գոտի ձեւավորող պետություն արտահանվող ապրանքների համար սակագնային առանձնաշնորհում՝ մաքսատուրքի վճարումից ազատման տեսքով (բացառությամբ ՈՊ ծածկագրով սահմանվող սակագնային առանձնաշնորհման)	ՅՅ
Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող ու դրանից արտահանվող եւ Մաքսային միության անդամ պետությունների տարածքներում տեղակայված դիվանագիտական ներկայացուցչությունների, հյուպատոսական հիմնարկների, օտարերկրյա պետությունների այլ պաշտոնական ներկայացուցչությունների կողմից պաշտոնեական օգտագործման համար նախատեսված, ինչպես նաեւ այդ ներկայացուցչությունների դիվանագիտական ու վարչատեխնիկական անձնակազմի՝ ներառյալ նրանց հետ ապրող՝ իրենց ընտանիքների անդամների կողմից անձնական օգտագործման համար նախատեսված ապրանքների համար մաքսատուրքի վճարումից ազատում	ՄԸ
Մաքսատուրքի վճարման գծով արտոնություններ չեն հայցվում	ՕՕ

1.2. Ենթակցիզային ապրանքների՝ Մաքսային միության մաքսային տարածք ներմուծման ժամանակ գանձվող ակցիզների վճարման գծով արտոնություններ	
<p>«Ներքին սպառման համար բացթողում», «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)», «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգերից բացի՝ մաքսային այլ ընթացակարգերով ձեւակերպվող ապրանքների համար ակցիզներ չեն վճարվում</p>	<p>П</p>
<p>Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող ու դրանից արտահանվող եւ Մաքսային միության անդամ պետությունների տարածքներում տեղակայված դիվանագիտական ներկայացուցչությունների, հյուպատոսական հիմնարկների, օտարերկրյա պետությունների այլ պաշտոնական ներկայացուցչությունների կողմից պաշտոնեական օգտագործման համար նախատեսված, ինչպես նաեւ այդ ներկայացուցչությունների դիվանագիտական ու վարչատեխնիկական անձնակազմի՝ ներառյալ նրանց հետ ապրող՝ իրենց ընտանիքների անդամների կողմից անձնական օգտագործման համար նախատեսված ենթակցիզային ապրանքների համար ակցիզի վճարումից ազատում</p>	<p>Д</p>
<p>Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերով եւ (կամ) Մաքսային միության հանձնաժողովի որոշումներով սահմանված ցանկում ընդգրկված եւ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպվող ապրանքների համար ակցիզների վճարումից լրիվ պայմանական ազատում</p>	<p>В</p>
<p>Մեկ առաքողի կողմից մեկ ստացողի հասցեով մեկ տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթով Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող այն ապրանքների համար, բացառությամբ անձնական օգտագործման ապրանքների, ակցիզների վճարումից ազատում, որոնց ընդհանուր մաքսային արժեքը չի գերազանցում երկու հարյուր եվրոյին համարժեք գումարը</p>	<p>Н</p>
<p>Տեղափոխվող պաշարների համար ակցիզների վճարումից ազատում</p>	<p>Р</p>
<p>Ակցիզների վճարման գծով արտոնություններ չեն հայցվում</p>	<p>О</p>
<p align="center">1.3. Ապրանքների՝ Մաքսային միության մաքսային տարածք ներմուծման ժամանակ գանձվող ավելացված արժեքի հարկի (այսուհետ՝ ԱԱՀ) վճարման գծով արտոնություններ</p>	
<p>«Ներքին սպառման համար բացթողում», «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)», «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգերից բացի՝ մաքսային այլ ընթացակարգով ձեւակերպվող ապրանքների համար ԱԱՀ չի վճարվում</p>	<p>ПП</p>
<p>Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող ու դրանից արտահանվող եւ Մաքսային միության անդամ պետությունների տարածքում տեղակայված դիվանագիտական ներկայացուցչությունների, հյուպատոսական հիմնարկների, օտարերկրյա պետությունների այլ պաշտոնական ներկայացուցչությունների կողմից պաշտոնեական օգտագործման համար նախատեսված, ինչպես նաեւ այդ ներկայացուցչությունների դիվանագիտական ու վարչատեխնիկական անձնակազմի՝ ներառյալ նրանց հետ ապրող՝ իրենց ընտանիքների անդամների կողմից անձնական</p>	<p>МД</p>

օգտագործման համար նախատեսված ապրանքների համար ԱԱՀ-ի վճարումից ազատում	
Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերով եւ (կամ) Մաքսային միության հանձնաժողովի որոշումներով սահմանված ցանկում ընդգրկված եւ «Ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպվող ապրանքների համար ԱԱՀ-ի վճարումից լրիվ պայմանական ազատում	PB
Բացառությամբ անձնական օգտագործման ապրանքների՝ մեկ առաքողի կողմից մեկ ստացողի հասցեով մեկ տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթով այն ապրանքների ներմուծման ժամանակ ԱԱՀ-ի վճարումից ազատում, որոնց ընդհանուր մաքսային արժեքը չի գերազանցում երկու հարյուր եվրոյին համարժեք գումարը	HC
Տեղափոխվող պաշարների համար ԱԱՀ-ի վճարումից ազատում	PI
ԱԱՀ-ի վճարման գծով արտոնություններ չեն հայցվում	OO
Բաժին 2. Բելառուսի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված արտոնություններ	
2.1. Մաքսավճարների վճարման գծով արտոնություններ	
Բելառուսի Հանրապետության ազգային բանկի կամ դրա կառուցվածքային ստորաբաժանումների կողմից ներմուծվող կամ արտահանվող ապրանքների հետ կապված մաքսային գործառնություններ իրականացնելու համար մաքսավճարների (մաքսային ձեւակերպում իրականացնելու համար վճարների) վճարումից ազատում	BB
Միջազգային անհատույց օգնության կարգով ներմուծվող կամ արտահանվող ապրանքների հետ կապված մաքսային գործառնություններ իրականացնելու համար մաքսավճարների (մաքսային ձեւակերպում իրականացնելու համար վճարների) վճարումից ազատում	BF
Միջազգային տեխնիկական օգնություն ցուցաբերելու նպատակով ներմուծվող կամ արտահանվող ապրանքների հետ կապված մաքսային գործառնություններ իրականացնելու համար մաքսավճարների (մաքսային ձեւակերպում իրականացնելու համար վճարների) վճարումից ազատում	BT
Միջազգային ավտոմոբիլային փոխադրողների ասոցիացիայի եւ Ավտոմոբիլային տրանսպորտի միջազգային միության միջեւ տեղափոխվող ՄՃՓ գրքույկների ձեւաթղթերի հետ կապված մաքսային գործառնություններ իրականացնելու համար մաքսավճարների (մաքսային ձեւակերպում իրականացնելու համար վճարների) վճարումից ազատում	KT
Ներմուծվող կամ արտահանվող՝ ԱՏԱ կառնետի ձեւաթղթերի կամ դրանց մասերի հետ կապված մաքսային գործառնություններ իրականացնելու համար մաքսավճարների (մաքսային ձեւակերպում իրականացնելու համար վճարների) վճարումից ազատում	KA
ԱՏԱ կառնետի կիրառմամբ ներմուծվող կամ արտահանվող ապրանքների հետ կապված մաքսային գործառնություններ իրականացնելու համար մաքսավճարների (մաքսային ձեւակերպում իրականացնելու համար վճարների) վճարումից ազատում այն դեպքում, եթե	KB

դրանք ամբողջությամբ ազատվեն մաքսատուրքերով, հարկերով հարկվելուց	
Ներմուծվող կամ արտահանվող ակցիզային դրոշմանիշների հետ կապված մաքսային գործառնություններ իրականացնելու համար մաքսավճարների (մաքսային ձեակերպում իրականացնելու համար վճարների) վճարումից ազատում	AA
Ցածր արժողության ապրանքների հետ կապված մաքսային գործառնություններ իրականացնելու համար մաքսավճարների (մաքսային ձեակերպում իրականացնելու համար վճարների) վճարումից ազատում	HC
Մաքսային միության մաքսային տարածքով որպես պաշար տեղափոխվող ապրանքների հետ կապված մաքսային գործառնություններ իրականացնելու համար մաքսավճարների (մաքսային ձեակերպում իրականացնելու համար վճարների) վճարումից ազատում	PP
«Մաքսային տարանցում», «հրաժարում՝ հոգուտ պետության», «արտահանում» մաքսային ընթացակարգերով, հատուկ մաքսային ընթացակարգերով ձեակերպվող ապրանքների հետ կապված, ինչպես նաև միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների ժամանակավոր ներմուծման, միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների ժամանակավոր արտահանման, պաշարների տեղափոխման ժամանակ մաքսային գործառնություններ իրականացնելու համար մաքսավճարների (մաքսային ձեակերպում իրականացնելու համար վճարների) վճարումից ազատում	PP
Օտարերկրյա դիվանագիտական եւ դրանց հավասարեցված ներկայացուցչությունների կողմից պաշտոնական օգտագործման կամ այդ ներկայացուցչությունների դիվանագիտական եւ (կամ) վարչատեխնիկական աշխատողների (ներառյալ նրանց հետ ապրող՝ իրենց ընտանիքների անդամների) կողմից անձնական օգտագործման համար տեղափոխվող ապրանքների հետ կապված մաքսային գործառնություններ իրականացնելու համար մաքսավճարների (մաքսային ձեակերպում իրականացնելու համար վճարների) վճարումից ազատում այն դեպքում, եթե նրանք Բելառուսի Հանրապետության քաղաքացի չեն	MD
Միջազգային կազմակերպությունների, այդ կազմակերպությունների անձնակազմի կողմից տեղափոխվող ապրանքների հետ կապված մաքսային գործառնություններ իրականացնելու համար մաքսավճարների (մաքսային ձեակերպում իրականացնելու համար վճարների) վճարումից ազատում	MO
«Օդային հաղորդակցության մասին» Բելառուսի Հանրապետության միջազգային համաձայնագրերի շրջանակներում տեղափոխվող ապրանքների հետ կապված մաքսային գործառնություններ իրականացնելու համար մաքսավճարների (մաքսային ձեակերպում իրականացնելու համար վճարների) վճարումից ազատում	MB
Մաքսային գործառնություններ իրականացնելու համար մաքսավճարների (մաքսային ձեակերպում իրականացնելու համար վճարների) գծով այլ՝ 2.1. ենթաբաժնում չնշված արտոնություններ	CI
Ապրանքների հետ կապված մաքսային գործառնություններ իրականացնելու համար մաքսավճարների (մաքսային գործառնություն իրականացնելու համար մաքսավճարների)	OO

վճարման գծով արտոնություններ չեն կիրառվում		
2.2. Մաքսատուրքերի վճարման գծով արտոնություններ		
2.2.1. Բելառուսի Հանրապետության օրենսդրական ակտերով սահմանված արտոնություններ		
Բելառուսի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ արտահանման մաքսատուրքերի վճարումից ազատում		ԲՊ
2.2.2. Միջազգային համաձայնագրերով նախատեսված արտոնություններ		
Միջազգային կազմակերպությունների, դրանց ներկայացուցչությունների, այդ կազմակերպությունների եւ ներկայացուցչությունների անձնակազմի, ինչպես նաեւ իրենց ընտանիքի անդամների կողմից Բելառուսի Հանրապետության տարածք ներմուծվող ապրանքների համար ներմուծման մաքսատուրքի վճարումից ազատում		ՄՕ
«Օդային հաղորդակցության մասին» Բելառուսի Հանրապետության միջազգային համաձայնագրերի շրջանակներում տեղափոխվող ապրանքների համար մաքսատուրքի վճարումից ազատում		ՄԵ
Միջազգային ավտոմոբիլային փոխադրողների ասոցիացիայի եւ Ավտոմոբիլային տրանսպորտի միջազգային միության միջեւ տեղափոխվող ՄՃՓ գրքույկների ձեւաթղթերի համար մաքսատուրքերի վճարումից ազատում		ԿԴ
Տիեզերական տարածքի հետազոտման եւ օգտագործման ոլորտում Մաքսային միության մասնակից պետությունների միջազգային համագործակցության, ինչպես նաեւ Մաքսային միության հանձնաժողովի կողմից հաստատվող ցանկի համաձայն տիեզերական ապարատները տիեզերք բաց թողնելու առնչությամբ ծառայությունների մատուցման մասին համաձայնագրերի շրջանակներում ներմուծվող ապրանքների համար մաքսատուրքի վճարումից ազատում		ՄԿ
«Բելառուսի Հանրապետության եւ Սերբիայի Հանրապետության միջեւ ազատ առեւտրի մասին» համաձայնագրի շրջանակներում ծագող եւ Սերբիա ներմուծվող ապրանքների համար սակագնային առանձնաշնորհում		ՊԼ
2.2.3. Մաքսատուրքերի վճարման գծով այլ՝ 1.1. եւ 2.2. ենթաբաժիններում չնշված արտոնություններ		ՊԻ
2.3. Ենթակցիզային ապրանքների՝ Մաքսային միության մաքսային տարածք ներմուծման ժամանակ գանձվող ակցիզների վճարման գծով արտոնություններ		
2.3.1. Բելառուսի Հանրապետության օրենսդրական ակտերով նախատեսված՝ ակցիզների վճարման գծով արտոնություններ		
Բելառուսի Հանրապետության նախագահի կողմից հաստատված ցանկի համաձայն՝ տրանսպորտային միջոցների համար ակցիզների վճարումից ազատում		Ա
Օտարերկրյա անհատույց օգնության կարգով ստացվող ապրանքների համար ակցիզների վճարումից ազատում		Դ
Միջազգային տեխնիկական օգնության հաշվին ձեռք բերված եւ (կամ) որպես այդպիսին		Դ

ստացվող (ստացված) ապրանքների համար ակցիզների վճարումից ազատում	
Ածխաջրածնային, սեղմված գազի եւ բնական, վառելիքային, սեղմված գազի համար ակցիզների վճարումից ազատում	Մ
2.3.2. Միջազգային համաձայնագրերով նախատեսված՝ ակցիզների վճարման գծով արտոնություններ	
Միջազգային կազմակերպությունների կամ միջկառավարական մարմինների, Բելառուսի Հանրապետության տարածքում դրանց ներկայացուցչությունների, այդ կազմակերպությունների ու ներկայացուցչությունների անձնակազմի, ինչպես նաեւ իրենց ընտանիքի անդամների կողմից տեղափոխվող ենթաակցիզային ապրանքների համար ակցիզների վճարումից ազատում	Խ
2.3.3. Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող ենթաակցիզային ապրանքների համար ակցիզների վճարման գծով այլ՝ 1.2. եւ 2.3. ենթաբաժիններում չնշված արտոնություններ	Ո
2.4. Ապրանքների՝ Մաքսային միության մաքսային տարածք ներմուծման ժամանակ ԱԱՀ-ի վճարման գծով արտոնություններ	
2.4.1. Բելառուսի Հանրապետության օրենսդրական ակտերով նախատեսված ԱԱՀ-ի վճարման գծով արտոնություններ	
Բելառուսի Հանրապետության եւ ներդրողի միջեւ կնքված ներդրումային պայմանագրերի շրջանակներում իրականացվող ներդրումային ծրագրերի իրականացման համար նախատեսված սարքավորումների, դրանց պահեստամասերի համար ԱԱՀ-ի վճարումից ազատում	ՈԴ
Օրինական վճարման միջոց հանդիսացող բելառուսական ռուբլու, արտարժույթի, մասնավորապես, թղթադրամների ու մետաղադրամների, ինչպես նաեւ արժեթղթերի, ակցիզային դրոշմանիշերի, մաքսային հսկողության դրոշմանիշերի, օրենսդրությանը համապատասխան վճարվող տուրքերի եւ վճարների դրոշմանիշերի համար ԱԱՀ-ի վճարումից ազատում	ԵԵ
Օտարերկրյա անհատույց օգնության կարգով ստացվող ապրանքների համար ԱԱՀ-ի վճարումից ազատում	ԵԴ
Միջազգային տեխնիկական օգնության կարգով ստացվող ապրանքների համար ԱԱՀ-ի վճարումից ազատում	ԵԵ
Բելառուսի Հանրապետության նախագահի կողմից հաստատված ցանկի համաձայն՝ տրանսպորտային միջոցների համար ԱԱՀ-ի վճարումից ազատում	ԱՄ
Հաշմանդամության կանխարգելման եւ հաշմանդամների վերականգնման համար բացառապես օգտագործվող տեխնիկական միջոցների, դեղամիջոցների (անասնաբուժական դեղամիջոցների), բժշկական (անասնաբուժական) նշանակության արտադրատեսակների, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների եւ բժշկական տեխնիկայի, ինչպես նաեւ դրանց արտադրության համար անհրաժեշտ հումքի ու կոմպլեկտավորող	ՄՄ

տարրերի համար ԱԱՀ-ի վճարումից ազատում	
Շտապ բժշկական օգնության, արտակարգ իրավիճակների հարցերով զբաղվող մարմինների ու ստորաբաժանումների, վթարային փրկարար ծառայությունների, ներքին գործերի մարմինների կարիքների համար հատուկ կահավորված տրանսպորտային միջոցների համար ԱԱՀ-ի վճարումից ազատում	CC
Թանկարժեք մետաղներից պատրաստված բանկային եւ սահմանված չափի ձուլակտորներ, որոնք ներմուծվում են բանկերի կողմից՝ բանկային գործառնություններ իրականացնելու համար եւ այլ կազմակերպությունների կողմից՝ բանկերին իրացնելու համար	BC
Ներքին պետական փոխառությունների (վարկերի) հաշվին ֆինանսավորվող ներդրումային ծրագրերի իրականացման համար նախատեսված տեխնոլոգիական սարքավորումների եւ դրանց պահեստամասերի համար ԱԱՀ-ի վճարումից ազատում	ГЗ
Պետական ֆոնդի համալրման նպատակով ներմուծվող թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի եւ դրանցից պատրաստված իրերի (իրերի մասերի) (բացի ոսկերչական իրերից), ինչպես նաեւ թանկարժեք եւ գունավոր մետաղներ պարունակող խտանյութերի ու արդյունաբերական այլ մնացորդների, ջարդոնի եւ մնացորդների համար ԱԱՀ-ի վճարումից ազատում	ДМ
Միջազգային գրքափոխանակության շրջանակներում պետական գրադարանների ու թանգարանների կողմից ստացվող բոլոր տեսակի տպագիր հրատարակությունների, ինչպես նաեւ միջազգային ոչ առետրային փոխանակում իրականացնելու նպատակով կինո- եւ տեսաստեղծագործությունների արտադրությամբ զբաղվող պետական կազմակերպությունների կողմից ներմուծվող կինո- եւ տեսաստեղծագործությունների համար ԱԱՀ-ի վճարումից ազատում	EO
Բելառուսի Հանրապետության նախագահի կողմից սահմանված կարգով մշակութային կազմակերպություններին որպես նվիրատվություն փոխանցվող գեղարվեստական արժեքների համար ԱԱՀ-ի վճարումից ազատում	EX
Գիտահետազոտական նպատակների համար օգտագործվող սարքավորումների եւ սարքերի, ինչպես նաեւ գիտահետազոտական, փորձարարական-կոնստրուկտորական եւ փորձարարական-տեխնոլոգիական աշխատանքների իրականացման համար նախատեսված նյութերի ու կոմպլեկտավորող տարրերի համար ԱԱՀ-ի վճարումից ազատում	НЦ
